

## Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Թ Ա Կ Ա Ն

«ԴՊՐՈՑԱԿԱՆ—ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՓՈՆԻ»

(Բարեգործական ընկերութեան նոր ձեռնարկութիւնը)

Ոչ շատ հեռու անցեալում Լրոպական ժողովրդներին մէջ անդամ տիրապետող էր այն կարծիքը, թէ ուսուցիչը այն պաշտօնեաների կարգին է պատկանում, որոնց գերագոյն առաքինութիւնն է տանջուել, չարչարուել ամենից շատ, իսկ տնտեսապէս վարձատրուել ամենից քիչ: Այդ է ցոյց տալիս Լրոպական երկրների մանաւանդ տարրական դպրոցների պատմութիւնը մինչև վերջին ժամանակները: Ուսուցչութիւնը թշուառ, երերուն, ճշուած դրութեան մէջ էր: Սակայն երբ պարզուեց, որ իսկապէս Մուտկէի այն դարձուածքի մէջ ճշմարտութիւն կայ, թէ Ֆրանս—պրուսական պատերազմի ժամանակ յաղթողները գերմանացի ուսուցիչներն էին, հասարակական լայն խաւերը սկսեցին աւելի ուշադիր լինել դէպի դպրոցական և ուսուցիչների տնտեսականի բարելաման խնդիրները: Արմատացաւ ընդհանրութեան մէջ այն կարծիքը, որ ճշուած դրութեան մէջ եղող ուսուցչի հոգին ամբողջովին չի կարող կապուել դպրոցի հետ, համոզուեցին շատերը, որ ներկայ դարում միմիայն բարոյական վարձատրութեամբ չի կարելի մի որոշ դասակարգի բաւարարել. համոզում դարձաւ նաև այն, որ ամեն մի դասակարգ ուղում է արևի տակ հաճելի տեղ բռնել, ներկայ կուլտուրայի զգայական և հոգեկան բարիքներից լայն չափերով օգտուել: Իսկ դրա համար ամեն ոք աշխատանքի վարձատրութեան աւելի մեծ չափ է պահանջում:

Պետութիւնների վերաբերմունքները դէպի ուսուցչական դասը օր օրի վրայ աւելի լաւացաւ, հասարակական

նոր տրամադրութիւնները անհնար էր հաշուի չառնել ազգութիւնների մէջ զործող լուսազոյն կուսակցութիւնները համաձայն ինչ, որ ուսուցիչները տնտեսապէս և իրաւապէս աւելի բարձրանան, որ նրանք ևս արժանանան այն ուշադրութեան, ինչպիսի ուշադրութեան են արժանանում պետական միւս պաշտօնեաները: Եւ իսկապէս 19-րդ դարու մանաւանդ վերջին կիսում տեսնում ենք, թէ ինչպէս նորանոր երևոյթներ են տեղի ունենում դպրոցական և ուսուցչական կեանքում. պետութիւնը բարելաւում է ուսուցչական սեմինարները, ուսուցիչներին որոշ չափի ազատում է տեսուչների և այլ իրաւատէր պաշտօնեաների աւելորդ ազդումներից. ուսուցիչներին աւելի սերտ է կապում դպրոցների հետ նլանց համար թոշակարկի հիմնելով և այլն և այլն:

Չպէտք է կարծել, թէ մի դասակարգի մասին միւս դասակարգները և պետական շրջանները կրկնակի մտածել են թէ այդ իրաւագուրկ դասակարգը չը կարողանայ իր ցանկութիւնները ուժեղ թսփով աբսայայտել և պաշտպանել: Այդ բոլոր փոփոխութիւնների գլխաւոր պատճառը հէնց ինքը ուսուցչութիւնն էր և սյն էլ կազմակերպուած ուսուցչութիւնը: Ներկայ կուլտուրական մեծ երկրներում ուսուցչական միութիւնների անդամները հարիւր հազարների են հասնում, որով և պարզուում է, թէ ինչու մի այդպիսի պատկառելի ուժ կարողանում է իր ազդեցութիւնը թողնել հասարակական և պետական կեանքի վրայ:

Ուսուցչական միութիւնները, առանձին գրուպպաները 19-րդ դարու լինթացքում մեծ շարժումների, կրքերի, կազմակերպուած կուռ պրօպագանդի, լրագրական պայքարի, հասարակական յաջողակ կազմակերպած համախմբումների լուսազոյն օրինակներն են ցոյց տուել: Եւ հասկանալի է այդպիսի ներքին երուն կեանք ունեցող դասակարգի շահերը, պահանջները անկարող են հաշուի չառնել պետութիւնները և հասարակական միւս խաւերը: Ներկայում և բուպական երկրների դպրոցական մեծ բարեփոխութիւնների յառաջացման և յաղթանակի գլխաւոր

պատճառները ուսուցչական կազմակերպութիւններն են լինում: Ուսուցչութիւնը ինքը պէտք է զգալ տայ, պարզաբանի իր ցաւերը, պարզի իր ձգտումները և ազդի հասարակական կարծիքի վրայ: Եթէ ուսուցչութիւնը ինքն իր մասին մտածել չտայ, ուրիշները ինքնաբերաբար միայն բացառիկ դէպքերում կը մտածեն: Գոնէ այդ է ցոյց տալիս լաւագոյն երկրների օրինակները:

Վերջին տարիներս վերստին բացուած հայոց եկեղեցական—ծխական դպրոցների ուսուցչութիւնը իր մասին խօսել և մտածել տալու համար բաւականին աշխատել է: Մեր պարբերական մամուլը, հասարակական համախմբումներից ոմանք, կամ զուտ ուսուցչական համագումարները այդ են ապացուցում: Մեր հասարակութեան բոլոր խաւերի համար պարզուել է, որ ծխական դպրոցների ուսուցչութիւնը անմխիթար, անհաստատ, տնտեսապէս ճնշուած դրութեան մէջ է գտնուում, ուսուցչութեան մեծագոյն մասը ներքին սերտ կապերով չէ միացած մեր դպրոցների հետ, որ ուսուցիչների մեծագոյն մասը մի փոքր աւելի յարմար պաշտօն գտնելու հնարաւարութեան դէպքում կը թողնէ դպրոց նոյն իսկ այդ դործը սիրելու դէպքում անգամ: Այս դրութիւնը իր մէջ կուտուրական մեծ վտանգ է պարունակում: այսպէս շարունակուել չի կարող ժամանակը հասունացել է, որ որ և է եղանակով ուսուցիչներն աւելի սերտ կապուեն դպրոցների հետ: Այդ դրութիւնը զգացել էր հանգուցեալ Իզմիրլեան Կաթողիկոսը, որի ուսումնական Ֆոնդ հիմնելու ցանկութիւնը և այդ նպատակով 5000 ռուբլի նուիրաբերելը այդ է ցոյց տալիս: Այդ դրութիւնը զգացել էին հանգուցեալ Կաթողիկոսի թաղման հանդիսին ներկայ լինելու համար հայկական ազգաբնակչութեան զանազան տեղերի և խաւերի կողմից ուղարկուած պատգամաւորները, որոնք մի ժողովի մէջ հանգուցեալ Կաթողիկոսի յիշատակը լաւագոյն եղանակով յարգելու ձևը գտան «Կպրոցական Ֆոնդ» հիմնելու որոշումով: Նոյն բանն է զգացել նաև Ռուսահայաստանում զործող կուտուրական հայկական կազմակերպու-

թիւնը—Բարեգործական ընկերութիւնը, որը վերջերս «Իպրոցական—Ուսուցչական Ֆոնդի» հիմքը դրեց:

Հայ ուսուցչութիւնը կարող է ուրախ լինել, որ իր իղձերը, ցանկութիւնները արձագանգ են գտնում մեր ժողովրդի զանազան խաւերի և հաստատութիւնների կողմից, նա կարող է համոզուել, որ ինքնագործութիւնն իր շահերի համար աշխատելը սկսում է որոշ դրական պտուղներ տալ: Իսկ այս հանգամանքը խթան պէտք է լինի աւելի կազմակերպուած և եռանդուն գործունէութեան:

Բարեգործական ընկերութեան այս նոր ձեռնարկութիւնը մի մեծ կենդանութիւն առաջ բ'րեց մեր պարբերական մամուլի մէջ. խնդիրը քննուեց հասարակական, ուսուցչական, զգացումների, հիացմունքների, սկզբունքային և այլ տեսակէտներից. երբեմն նոյն իսկ դժգոհութեան ձայներ էլ լսուեցին: Հասկանալի է, որ այդպէս էլ պէտք է լինէր, որովհետև մեր կեանքում մի նոր հաստատութիւն, մի նոր մեծ և համակրելի ձեռնարկութիւն էր սկսում: Այսպիսի դէպքերում լուրջ և անաչառ քննադատութիւնը կարող է պարզել այն սահմանները, որից այն կողմը չպէտք է անցնէ այդ նոր հաստատութիւնը և այն գործունէութեան շրջանակը, որի մէջ ազատ այս ու այն կողմ կարող է շարժուել նա:

Ընդունում ենք, որ Բարեգործական ընկերութեան այս նոր ձեռնարկութիւնը ընդհանուր առմամբ համակրելի և քաջալերական գործ է, սակայն հարկաւոր ենք համարում այդ ձեռնարկութեան հետ կապուած մի քանի հարցերի լուսաբանութիւնը տալը. դա մի նոր գործ է, որքան անաչառ քննադատութեան ենթարկուէ նա, այնքան յաջողակ կը լինի նրա ապագայ զարգացումը:

Ի՞նչ է թոշակարկը: Մի դպրոցի կամ մի քանի և կամ բոլոր նոյն տիպին պատկանող դպրոցների ուսուցիչների համար կառավարող շրջանները հիմնում են անկախ, ինքնուրոյն և ինքնօգնութեան սկզբունքի վրայ կազմակերպած կենդրոնական կասսա, որից ուսուցիչները որոշ տարիներ աշխատելուց յետոյ ստանում են տարեկան որոշ

քանակի թոշակ: Պետութիւնը կամ իրաւատէր մարմինը միառժամանակ տարեկան կամ մշտապէս ամեն տարի որոշ գումար է յատկացնում այդ դրամագլխի համար: Տարեկան այդ նպաստները չեն կարող բաւարարել մեծ կարիքներին, ուստի պետութիւնը կամ իրաւատէր մարմինը դրամագլուխը մեծացնելու և ծախքերը ծածկելու համար զպրօցներում պաշտօնավարող ուսուցիչներից ստանում է ոռձկի որոշ տոկոսներ: Տոկոսների այս գանձումն ունինաւ բարոյական արժէք. ամեն մի ուսուցիչ զգում է իրեն գործի տէր. նա ողորմութիւն չի ստանում պետութիւնից կամ իրաւատիրոջից, այլ նրա զիտակցութեան մէջ հիմք է բռնում իրաւատէր լինելու զազափարը, որը բարոյապէս բարձրացնող մի կողմ ունի: Ուրեմն տոկոսների գանձումը անպայման տեղի պէտք է ունենայ, թող նա լինի մի չնչին գումար, այնքան չնչին, որ շատերի համար նոյնիսկ ծիծաղելի լինի, սակայն այնուամենայնիւ ուսուցչին այդ եղանակով պէտք է կապել գործի հետ, եթէ չենք ուզում, որ այդ հաստատութիւնը վիրաւորական դառնայ ուսուցչի համար:

Այժմ անցնենք Բարեգործական ընկերութեան «Գարոցական—Ուսուցչական Ֆոնդի» հարցին: Քննադատներից շատերը այն կարծիքին են, թէ այդ նոր հաստատութիւնը իսկապէս զպրօցական ուսուցչական թոշակարկ է, իսկ եթէ այդպէս չէ, ապա պէտք է աշխատել նրան այդ գոյնը տալ: Ուսուցիչներից շատ-շատերի մէջ ևս այդպիսի համոզում է կազմուել: Նախ զբաղուենք այդ տեսակէտի քննութեամբ: Բարեգործական ընկերութեան այդ նոր ձեռնարկութիւնը չի կարող «ուսուցչական թոշակարկ» դառնալ շատ պարզ պատճառով: Ամեն մի թոշակարկ կարող է հիմնել միմիայն իրաւատէր մարմինը և ոչ մասնաւոր ընկերութիւնը, այս դէպքում այդ գործին ձեռնամուխ կարող է լինել միմիայն և միմիայն էջմիրածինը: Ոչ մի տեղ չի տեսնուած, որ մի Բարեգործական, Կուլտուրական կամ որ և է ոչ պաշտօնական մարմին փորձէ ուսուցչական ընդհանուր թոշակարկ հիմնել: Դա անկարելի մի բան է, հակառակ դէպքում

պարտականութիւնների և իրաւունքների սահմանների տարօրինակ խառնուրդներ կըստացուէին: Մասնաւոր ընկերութիւնները կարող են միմիայն տնտեսապէս անմիջապէս նպաստել դպրոցներին և իրաւունք ունին ամենաշատը տեղեկանալու, թէ իրենց նպաստները ինչպէս են գործադրուել: Դպրոցը փակել, մանկավարժական կեանքի վրայ կոնտրոլ ունենալ, ուսուցչական պայքարների ժամանակ իբրև իրաւասու մարմին ներկայանալ և այլն, չի վերապահուած մասնաւոր ընկերութիւններին, որովհետև նրանց իրաւասութեան սահմաններից վեր է այդ հարցերի մէջ մտնելը: Նախ պէտք է իրաւատէր լինել և յետոյ միայն կոնտրոլի հարցում իշխանաւոր: Այս բոլորից յետոյ պարզուամ է ի հարկէ, որ իրաւագուրկ մի մարմին չի կարող կուլտուրական երկրների նման կազմակերպուած թոշակարկիչների տէրը դառնալ: Մասնաւոր ընկերութիւն չի կարող ուսուցիչներից տոկոսներ վերցնել, ուրեմն և նա չի կարող լաւագոյն և ցանկալի տիպի թոշակարկիչ հիմնել: Իրաւունքների այսպիսի գուցէ ակամայ շփոթութիւնների դէպքեր տեղի են ունեցել անցեալում. ցանկալի չէ, որ այդպիսի երևոյթներ նորից հանդէս գան մեր կեանքում:

Մեր դպրոցների իրաւատէրը Էջմիածինն է, ուստի և ապագայում հիմնելիք թոշակարկիչը այսպէս թէ այնպէս պէտք է Էջմիածնի հետ կապուէ, գործի մի այլ ձևակերպում անհնար է երևակայել: Այդ խնդիրը լուծել կարող է միմիայն պաշտօնական մարմինը, ինչպէս ուրիշ ժողովրդների օրինակները ցոյց են տալիս:

Գուցէ ի ցաւ ուսուցիչներից շատերի, սակայն կարճ և կտրուկ պէտք է եզրակացնենք մեր ասածները հետևեալ կերպ. անապահով ծխական դպրոցների ուսուցիչների համար դեռ չի լուծուել կարգին եղանակով ուսուցիչների ապահովութեան կարևորագոյն խնդիրներից մէկը. այժմ միմիայն պալիատիւ փորձեր են անուում, այնպէս որ ուսուցիչների պրօպագանտի, աշխատանքի, լարումների փորձեր այդ ուղղութեամբ դեռ չպէտք է սպառեն. այժմ միմիայն պէտք է զղացուի աւելի լայն չափերով աշխատելու կարի-

քը՝ իսկ ամենագլխաւորը այն է, որ ցանկութիւններն և աշխատանքի փորձերը ուղղուեն դէպի բուն նպատակատեղին — դէպի Էջմիածինը: Մենք ասեցինք վերևը. յաճախ իրաւատէրերին որոշ ուղղութեամբ գործի պէտք է հրաւիրեն ոչ իրաւատէր մարմինները:

Սակայն ի՞նչ էր մտածում Բարեգործական ընկերութեան խորհուրդը այդ որոշումը անելիս, միթէ՞ նրա համար պարզ չէր, որ ինքը այդպիսի ծանր և պաշտօնական բնաւորութիւն կրող գործի գլուխ չի կարող անցնել: Պէտք է խոստովանել, որ Բարեգործական ընկերութիւնը իսկապէս խնդիրը այնքան լայն չի ըմբռնել, ինչպէս ուզում են բացատրել շատերը, նա միտք չէ ունեցել ուսուցչական իսկական թոշակարկղ հիմնելու, նա աւելի սահմանափակ ծրագիր է ունեցել, թէ և նրա յայտարարութեան մէջ մի քանի կէտեր կան, որոնք կարող են թիւրիմացութեան առիթ դառնալ: Այդ յայտարարութիւնից երևում է, որ ընկերութիւնը որոշել է իր յօբելեանը յաւերժացնել «հիմնելով «Դպրոցական-Ուսուցչական Ֆոնդ», որի նպատակն է լինելու, առաջին՝ աւելի լայն ծաւալով տարածել լուսաւորութիւնը հայ ազգաբնակչութեան մէջ և երկրորդ՝ օգնել այն բազմաշխատ հայ ուսուցիչ-ուսուցչուհիներին, որոնք երկար և ծանր աշխատանքից դարձել են անզօր իրանց գոյութիւնը պահպանելու, տալով նրանց կամ միանուագ նպաստ կամ նշանակելով կենսաթոշակ\*»:

Կարդալով այս նախագասութիւնները մարդ առաջին անգամ այն տպաւորութիւնն է ստանում, որ Բարեգ. ընկ. իսկապէս ցանկացել է իսկական ուսուցչական թոշակարկղ հիմնել, սակայն ուշադիր դիտելուց յետոյ երևում է, որ այդ ընկերութիւնը մի այլ բան է աչքի առաջ ունեցել: Ի՞նչ հիման վրայ ընթերցողը կարող է առաջին եզրակացութեանը գալ՝ նախ նորա համար, որ բոլոր բազմաշխատ ուսուցիչները ստանում են նպաստ. բացի այդ նպաստի գլխաւոր ձևն է կենսաթոշակը, որը յատուկ է ամեն մի իսկական

\*) Տես «Արարատի» այս տարուայ յունուարի համարը:

Թոշակարկղի։ Ահա այս երկու հանգամանքները Բարեգ, ընկ. ձեռնարկու թիւնը մօտեցնում են իսկական պաշտօնական թոշակարկղներին։ Մեր բացազրու թեամբ Բարեգ, ընկ. պէտք է վարձատրէ բոլոր բաղմաշխատ ուսուցիչներին, որովհետեւ մեր ըմբռնմամբ ամեն մի ուսուցիչ, որը ծառայել է 25—30 տարի, արդէն բաղմաշխատ է և պէտք է նպաստներ ստանայ, նա արդէն էլ բարոյական իրաւունք չունի շարունակելու իր պաշտօնավարութիւնը, որովհետեւ այնուհետեւ նրա աշխատանքը քիչ արդիւնաբեր է դառնում։ Գուցէ ոմանք այլ կերպ բացատրէին Բարեգ, ընկ. միտքը մեզ առարկելով՝ թէ այդ ընկ. միտք է ունեցել վարձատրելու միմեայն այն ուսուցիչներին, որոնք իրապէս բառի իսկական նշանակու թեամբ անկարող են դարձել իրենց գոյութիւնը պահպանելու։ Եթէ խնդրին այդ բացատրութիւնն է տրուելու, այն դէպքում պարզ է, որ Բարեգ, ընկ. ցանկացել է մի շատ նեղ ծրագրով գործ կազմակերպել, որը մեր կարծիքով աւելի ցանկալի կը լինէր։

Մի քանի կէտերում Բարեգործ, ընկ. Ֆոնդը միանգամայն տարբերում է պաշտօնական թոշակարկղի տիպից։ Այդ ընկերութիւնը ասպազայում կենսաթոշակ տալու համար ուսուցիչներին տոկոսներ չի վերցնում, ուսուցիչներին մշտական նպաստներ չի ստանում, այդ մասին յայտարարութեան մէջ ոչինչ չէր յիշած և չէր էլ կարող լինել ինչպէս տեսանք, նա դպրոցների պաշտօնական իրաւատէրը չէ, այլ մի անկախ և մասնաւոր բարեգործական ընկերութիւն է։ Բացի այդ վարձատրելու գլխաւոր եղանակներից մէկն է նաև միանուազ նպաստները, մի ձև, որից խոյս են տալի ընդհանրապէս պաշտօնական թոշակարկղները։ Այս բոլորից յետոյ ստանում ենք մի այլ տիպի թոշակարկղ, որը բարեգործական և նպաստների սկզբունքների վրայ է հիմնած։ Բարեգործական ընկ. ինչպէս էլ գործը կազմակերպէ, նրա Ֆոնդի բնաւորութիւնը չի կարող փոխուել, այնտեղ նպաստ, նուէր է տրուում ուսուցիչը միշտ այն գիտակցութիւնը պէտք է ունենայ որ նպաստ է ստանում մի մասնաւոր ընկերութիւնից, նա պահանջող իրաւատէր

չէ: Սակայն ցանկալի է, որ նա ապահով զրութեանը հասնէ մի այլ եղանակով կազմակերպուած գործի միջոցաւ: Անգործին, ազբատին նպաստներ տալը վատ արարք չէ, սակայն լաւագոյն վարմունքը այն է, որ նրան այնպէս օգնես, որ նա իր գոյութիւնը պահպանելու ժամանակ մշտապէս նպաստներ ստացողի կարծիք չկազմէ իր մասին, նրան այնպիսի գործի հետ կապես, որի գոյութիւնը մասամբ իր եսի հետ անջակից ընդունէ: Եթէ մեր կեանքում ուսուցիչներին կենսաթոշակ տալու համար մի աւելի պաշտօնական գործի հիմք չպէտք է զրուի, այն գէպքում Բարեգործական ընկերութեան այս նոր գործը չեղածից լաւ համարելով՝ մեր ամբողջ ուշադրութիւնը պէտք է կենդրոնացնենք նրա վրայ՝ նրան աւելի լայն հիմունքներ տալու համար:

Շատ և շատ ցանկալի է սակայն գործը այդ կերպարանքը չստանայ, այսինքն՝ Բարեգործական ընկերութեան հետ չկապուի հայ ուսուցիչներին կենսաթոշակ տալու խնդիրը: Նա մի մասնաւոր ընկերութիւն է և չի կարող այդպիսի գործի զլուխ անցնել: Հայ ուսուցչութիւնը թոշակտրկից հարցը փակուած չպէտք է համարէ, նա գեո՛ւ աշխատելու շատ բան ունի. նա իր զխաւոր ցանկութիւններէից և պահանջներէից մէկը պէտք է դարձնէ պաշտօնական թոշակարկը հիմնելու խնդիրը և այդ ուղղութեամբ՝ աշխատէ՝ ամենայն եղանակով:

**Գ. Էդիկեան**

Էդիկեան մի՞ զո՞ւ յարգաւորաց յիշմանարմա՞ր բլմ  
 Եդիկեան գարագազան զանա՞ք բնիկ յիշողն մ՛մ բնարա  
 Եմք մ՛մ բնարա զդիկեանացոս զուայնք զմաստապա՞մ, բնի  
 Եպիսոն զգապիկի զման՞կց՝ մարեանաբաստիմ՝ ճարպանոց  
 Եսմիկեան ըմբա՞նց մամուղալու զդմմարցայի մ զդմուրկ  
 Եողբամանդա մմարեան ճաւո՞նա ուլալ զ Եողբեմեպեւա իջ  
 Եմիմաննա՞մ մամիկոտոբաստիմ զդմիկեմիկանիտո՞ւ, զմ. իկ  
 Եմ. իկ յողբամանդա զդմ մմիմիտայ ճաւո՞նալս ուսուցչեմա  
 Եանա բլա իտջար զո՞ւ, յայնտառասա՞ւ մմ սկյար միսայն զգոյոց  
 Ետիպաչ մկայ մ մմ յմբախա՞մ սխառոյն զմ. իկ յողբոցմար  
 Ելուտար